

ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՎԱՍՏԱԿԵԱԼՆԵՐԻ ՀԱՆԳՈՒՑԻՉՀԱՅԻ

ԵՐԵՒՔ կեանքում տառապանքը այնքան լեռնացած, վիշտը այնքան խորը չէ եղել, որքան մեր անակնկալներով հարուստ ժամանակում:

Մարդկանց կորուստնելը թուի, չափի տակ չեն մըտնում, հոգու մշակոյթի աւերածութիւններին վերջ, սահման չկայ:

Մի ըոպէ ակամայից մարդ կասկածում է արդարութեան, ճշմարտութեան գոյութեան վրայ:

Դարեր շարունակ աւետարանական բարոյական սկզբունքները վարդապետողները, այդ սկզբունքներին ջերմօրէն հետևողները այսօր կարծես հակառակն են տեսնում իրականութեան մէջ ու թերահաւատում:

Նայեցէք շուրջներդ ու կտեսնէք մի կողմից աւել աւար, միւս կողմից տառապանքի բեռը շալակածների շարաններ:

Որբերի թիւը օրէցօր աւելանում. այրիների քանակը կրկնապատկւում. սգաւորների շարքը մեծանում:

Ու մենք այս մի քանի տարում կարծես քարացել ենք լեռնացած տառապանքի հանդէպ, անյատակ վշտի առաջ շուարել կանգնել ենք ու խօսք չունինք ասելու. արցունք չունինք թափելու:

Ո՞վ մեզանից այժմ անկորուստ է. ո՞վ մեզանից այս վայրագ պատերազմի պատճառով այս կամ այն կոկչից տղատ է մնացել:

Մենք բոլորս ենք վշտուա. մեր ամենքիս հոգին է թախծուտ, մենք ամենքս սդոյ զգեստ ունինք։
իսկ մեր հոգու աշխարհը...»

Այնտեղ երաշտ է տաք զգացմունքի. այնտեղ գաղափարի սով է, այնտեղ կարեկցութեան ամայութիւն է. այնտեղ եղբայրական ջերմ խօսքի սև անառատն է իշխում։

Եւ մենք բոլորս շուարած, իրար դէմ կանդնած նայում ենք ու չգիտենք, ի՞նչ ասենք։ Մեր լեզուները կարկամած են, մեր աչքերը քարացած, սրտները դատարկուած։

Մեզնից ամեն մէկը կարօտ է մխիթարանքի, կարեւկից խօսքի. մեզնից իւրաքանչիւրը խորը հաւատ ներշնչող, յուսադրող խօսքի ծարաւն ունի։

Զէ որ տառապանքը շատ է մեծ ու ահաւոր, որ առանց յուսոյ, հաւատի այն տանել կարելի լինի։

Ու երբ շուարած չորս կողմն ենք նայում միայն մխիթարանքի տեսնչացող դէմքեր ենք տեսնում, միայն սփոփանքի կարօտ հայեացքների հանդիպում։

Լքման, շուարման այդ ծանր ժամին միայն տառապանքներից մեծագոյնը, վշտերից ահաւորը կրող Փրկչի դէմքն է կանգնում մեր առաջ, իր լուսաւոր հայեացքով, սփոփիչ խօսքով, կարեկցող սրտով։

«Եկայք առ իս ամենայն վաստակեալք և բեռնաւորը և ես հանգուցից զձեզ» կանչում է Մարդոյ Որդին։

Խնամող սիրոյ կենդանի աղբիւրից բղխած խօսքերը որքան մաքուր, անկեղծ են հնչւում մեր ականջին ու ի՞նչպէս տառապանքներին դէպի իրեն քաշում։

Նայում ես մարդկութեան տառապանքը իր ուսերին տուած Փրկչին ու վատահօրէն դէպի նա դիմում, Նրա փէշը բռնում, Նրա առաջ ծունկի գալիս ու վշտիդ դժուար ըեռը Նրա ոտքի առաջ դնում, թեթևանում։

Փղձկում է արնոտ հոգին, չորացած աչքերիցդ տա-

ուսպանքի շիթերն են վազում, ծուատուած հոգուցդ դառն
տանջանքը ելնում, կորչում:

Մեծ վարդապետի սիրող սրտում միայն տեղ ունին
վշտահարները. Նրա երկնային անկաշկանդ հոգում միայն
մխիթարանք ենք գտնում տառապեալները:

Ո՞րքան դաժան է դառնում իրականութիւնը, այնքան
աւելի լուսով պայծառացած կանգնում է մեր առաջ Փրկչի
վեհապանծ դէմքը. ո՞րքան տառապանքը լեռնանում է,
այնքան աւելի վաստակեալի խնամողի կարիքն ենք
զգում:

Վաստակեալներ և բեռնաւորներ, մխիթարանքի սփո-
փան կարօտեալներ դէպի Փրկիչը զիմենք, դէպի մարդ-
կութեան մեծ վաստակաւոր-բեռնաւորը այնտեղ միտյն
կգտնենք մեր ցանկալի հանգիստը:

Գ. Ա.

